



ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

(Ռուբեն Գալիչյան. «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ»,
Երևան, 2005, 271 էջ)

Պատմագիտության կարևորագույն բնագավառներից է պատմական քարտեզագրությունը: Հայաստանը իր քաղաքակրթական արժեքներով եղել է հին և միջնադարյան հեղինակների ու քարտեզագիրների ուշադրության կենտրոնում: Բրիտանական թանգարանի և Ֆրանսիայի Ազգային գրադարաններում քարտեզների ուսումնասիրության և վերատպության շուրջ երեսուն տարիների արգասիք է մասնագիտությամբ ճարտարագետ Ռուբեն Գալիչյանի «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ» (Երևան, 2005, 271 էջ) երկվեզու (հայերեն ու ռուսերեն) աշխատությունը¹, որը համաշխարհային պատմական քարտեզագրության գանձարանից ընտրված թվով մոտ 170 քարտեզների (զգալի մասը՝ օտարալեզու) ժողովածու է: Հեղինակի ավանդը հոգեկցված է իր որդու՝ Լևոնի հիշատակով, որին նվիրել է գրքերը:

Դեռևս հնագույն ժամանակներում երկրի մակերևույթը Հայաստանում քարտեզագրվել է ժայռապատկերներում: Վաղ միջնադարում Մովսես Խորենացու (V դ.) և նրա գործը շարունակող Անանիա Շիրակացու (VII դ.) «Աշխարհայացոյց»-ը հնում հայտնի աշխարհի քարտեզների (ներառյալ՝ Հայաստանի) մի երկ է՝ որոշակի գործնական նշանակությամբ, որպես Հայոց ամբողջական պետության վերականգնման փաստաթուղթ և աշխարհագրության ու քարտեզագրության դասագիրք: Հայ իրականության մեջ քարտեզների ժողովածու կազմելու գործը դարերի ավանդույթ ունի: Հին բովանդակությամբ և նոր հնչեղությամբ Ռ. Գալիչյանի աշխատությունը շարունակությունն է այդ ավանդների:

¹ Անգլերեն լեզվով հրատարակությունը տես՝ Rouben Galichian. *Historic Maps of Armenia: The Cartographic Heritage*. London, 2004, pp. 232.

Հայաստանը Բաբելոնից և Ասորեստանից հյուսիս է պատկերված բաբելոնյան կավե սալիկի վրա փորագրված քարտեզում (VI դ. մ.թ.ա.), իսկ Հեկատես Միլետացու աշխարհի քարտեզում՝ Սև և Կասպից ծովերի միջև: Հայաստանը կենտրոնական դիրքում է Հերոդոտոսի (մ.թ.ա. V դ.), Էրատոսթենեսի (մ.թ.ա. III-II դդ.), Ստրաբոնի (մ.թ.ա. 64-մ.թ. 24թթ.), Պոմպոնիոս Մելայի (I դար) քարտեզներում: Առավել մանրակրկիտ տեղեկություններ են պարունակում Պտղոմեոսի (83-168 թթ.) քարտեզները Մեծ Հայքի և Փոքր Հայքի մասին:

Վաղ միջնադարում Հայաստանը պատկերված է «Պևտինգերյան քարտեզում» (IV դար), Ջերոմի (V դար, պատճենը՝ 12-րդ դար) և Սևիլիայի եպիսկոպոս Իսիդորի (VII դար) քարտեզներում: Ալ-Իստարիսի (IX դ. երկրորդ կես-X դ.) երեք քարտեզներում Հայաստանը պատկերված է Արարատ լեռով և մի շարք բնակավայրերով (Կարին, Դվին, Մանազկերտ և այլն) և լճերով (Վան, Ուրմիա):

Միջնադարյան քարտեզագրությանը բնորոշ էին աշխարհագրական տվյալների հետ նաև հոգևոր բնույթի նկարագրությունները՝ արտացոլելով Հայաստանում Դրախտի տեղադրության և համաշխարհային ջրհեղեղից հետո Արարատի գագաթին Նոյյան տապանի հանգրվանելով՝ մարդկության փրկության աստվածաշնչյան թեմաները: Անգլիայի Հերեֆորդ քաղաքի Մայր Տաճարում պահվող Մապյա Մունդին (Աշխարհի քարտեզ, շուրջ 1300 թ.) պարունակում է Մեծ և Փոքր Հայքերը՝ Հայկական լեռներով: 1339 թ. Միջերկրական ծովի պորտուլանում (նավագնացության ուղղությունների գիրք) գրանցված են Հայաստանը, «Փոքր Հայքը» (իմա՝ Կիլիկիան՝ իր քաղաքների դրոշներով), Եփրատը և Տիգրիսը:

Ֆրանսիայի թագավոր Կարլոս V-ին նվիրված ատլասի (1375 թ.) նմանությամբ պատրաստված «Վիլադեստես» պորտուլանում ներկայացված է Հայկական լեռնաշխարհը Արարատի երկու գագաթներով, որոնց վրա պատկերված է Նոյյան տապանը: 1450-ական թթ. «Էստենգե» քարտեզում արևելյան կիսագնդի երկրների թվում պատկերված է Մեծ Հայքը՝ Արարատի գագաթին իջևանած Նոյյան տապանով:

Ռ. Գալյանի գրքում միջնադարյան քարտեզների շարքում են Կղավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» բնագրի հիման վրա կազմված Մեծ Հայքի և Փոքր Հայքի քարտեզները: Հեղինակը գրում է, որ Փոքր Հայքի ցուցակը «պարունակում է 79 տեղանուն» (էջ 19, անգլ. թ. 29), ինչը, ըստ Ռոբերտ Նյուսենի, «իրականում պետք է լիներ 29», որպես «7-ի և 2-ի մի պարզունակ վրիպակ» [Journal for the Society of Armenian Studies, Vol. 14, 2005, USA, pp. 202-205]: Սակայն Նյուսենը սխալվելով, այդ թիվը վերցրել է Փոքր Հայքի ցուցակից հետո՝ Մեծ Հայքին նախորդող բուն Աղվանքի ցուցակից, ուր Պտղոմեոսը 29 քաղաք է հիշատակել (Geography of Claudius Ptolemy, transl and edited by E. L. Stevenson, New York, 1932, p. 118-123):

Հայաստանը պատկերված է Ջերարդոս Մերկատորի, Հայնրիխ Բունտինգի, Աբրահամ Օրտելիուսի, Ջիովաննի Անտոնիո Մաջջինիի, Ֆիլիպ դե լա Ռուի և այլոց քարտեզներում: 1675 թ. Աթանասեոս Կիրշերի կազմած քարտեզում պատկերված է Երկրային Դրախտը, որի հյուսիս-արևելյան կողմում երկու անգամ գրված է Հայաստան անունը:

Հայ քարտեզագրության պատմության մեջ կարևոր են Երեմիա Չելեբի Քյումուրճյանի Կոստանդնուպոլսում 1691 թ. պատրաստած հայերեն ձեռագիր, ինչպես նաև 1695 թ. Ամստերդամում լույս տեսած հայերեն առաջին տպագիր «Համատարած Աշխարհացոյց» քարտեզները:

XVIII դարի քարտեզագիրները Հայաստանը հիմնականում նշել են Մեծ Հայք անվանումով: Հայաստանի բավականին ճշգրիտ քարտեզագրական պատկերն են ներկայացնում 1736 թ. լատիներեն և հայերեն լեզուներով Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» և «Աշխարհացոյց» համատեղ տպագրված հատորից վերցված, ինչպես նաև 1751 թ. Իզնատիոս Խաչատուրյանի ձեռքով «Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին և նոր աշխարհագրաց» (վորագրված Վենետիկում) քարտեզները: XVIII դ. վերջում Լոնդոնում և Փարիզում քարտեզներ են կազմվել, ուր Դրախտը ներկայացվել է Վանա լճի ավազանում:

XIX դ. Հայաստանը պատկերող քարտեզներ են կազմել Ռոբերտ Քրրոնը, Կառլ Ֆոն Սպռուները և Հայնրիխ Կիպերտը: XIX դ. վերջին և XX դ. սկզբին լույս է տեսել Լինչի (համահեղինակ՝ Օզվալդ) քարտեզը (1901 թ.)՝ հրատարակված «Հայաստանյան ճանապարհորդություններ և հուշեր» գրքի հետ:

Բազում այլ քարտեզների շարքում Ռ. Գալյանի գրքում զետեղված են 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովին մասնակցած հայկական պատվիրակության համար կազմած քարտեզը (հեղ.՝ Ջատիկ Խանզադյան), ինչպես նաև Հայաստանի արևմտյան սահմանագծի քարտեզը ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Ուիլսոնի ստորագրությամբ (1920 թ. օգոստոս): Գիրքն ավարտվում է Հայկական լեռնաշխարհի (հեղ.՝ ակադեմիկոս Սուրեն Երեմյան), Հայկական ԽՍՀ ֆիզիկական, Հունգարիայում հրատարակված (2001 թ.)՝ Հայաստանի արդի քարտեզներով և Արարատի համայնապատկերի արբանյակային լուսանկարով:

Հեղինակը նշել է, որ իր աշխատանքի արդյունքը «գիտական աշխատություն կամ հետազոտություն չէ, ինչպիսին արել են մի քանի արժանավոր պատմաբաններ ու քարտեզագետներ» (էջ 10), սակայն արդեն իսկ բազմաբնույթ քարտեզների ընդգրկումը և դրանց տրվող բացատրությունները պահանջում են մասնագիտական մոտեցումներ:

Գրքի «Պատմական ակնարկում» ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատողներ, ԵՊՀ դասախոսներ Լևոն Աբրահամյանը և Հարություն Մարությանը գրել են. «Հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկներն են... և մաս են կազմում հնդեվրոպական մշակութային աշխարհի», սակայն, այնուհետև, առանց որևէ հիմնավորման նշել, որ մ.թ.ա. II հազ. կեսերից այս տարածքի «առաջին ռազմաքաղաքական կազմավորումների» «Էթնիկ բաղկացուցիչներից մեկն էին, եթե ոչ գերակշռողը»՝ «նախահայկական ցեղերը», իսկ Հայաստանի արմատները նրանք խեթական են համարել (էջ 8):

Հայերին ներկայացնելով տեղաբնիկ, իսկ հայ մշակույթը՝ հնդեվրոպական մշակույթի մաս, նրանք անշուշտ ելնում են այն հայեցակարգից, համաձայն որի՝ մ.թ.ա. V-IV հազ. Հայկական լեռնաշխարհը հնդեվրոպական «նախահայրենիքի» կենտ-

րոնն էր: Մակայն, հակասելով հենց իրենց իսկ արտահայտած դրույթին, տեղաբնիկ հայերին անվանել են «նախահայկական ցեղեր», և, անտեսելով Գր. Ղափանցյանի տեսությունը («Հայասա՝ հայերի բնօրրան»), Հայասային «խեթական արմատներ» են վերագրել: Նման խառնաշփոթը Ռ. Գալյանի խորհրդատուների (որոնց նա վստահել է) «տեսակետների» հետևանք է: Իր շնորհակալական խոսքում նա հիշատակել է ԵՊՀ պրոֆ. Բաբկեն Հարությունյանին: Վերջինս նաև վերոհիշյալ Ռ. Հյուսենի «Armenia. A Historical Atlas» (Chicago and London, 2001) գրքի խորհրդատուն էր, ուր խնդրո առարկա հարցի մասին հեղինակը նշել է. «Մոտ մ.թ.ա. 3000-ին նախահայկական ցեղերի նախնիները դեռևս կապված էին Սև ծովից հյուսիս գտնվող հնդեվրոպացիներին խոսողների հիմնական զանգվածի հետ: Հաջորդ երկու հազարամյակների ընթացքում, այնուամենայնիվ, մեծ թվով ազգակից ցեղեր անջատվեցին հիմնական զանգվածից և սկսեցին գաղթել Բալկաններ: Այստեղ ցեղերի մի խումբը, որին մենք կարող ենք անվանել նախահույներ, հաստատվեց այն տեղում, որը պետք է դառնար նրանց հունական հայրենիքը, իսկ մնացածը, անցնելով Փոքր Ասիա, շարժվեց դեպի արևմտյան կենտրոնական Անատոլիա ... Նախահայերը իրենց գաղթի ժամանակ հավանաբար պետք է խառնվեին խեթա-լուվիացիների և, այնուհետև, հուրրի-ուրարտացիների հետ...» (էջ 24): Այսինքն, Ռ. Գալյանի աշխատանքի մեջ Լ. Աբրահամյանի ու Հ. Մարությանի գրչով և Բ. Հարությունյանի խորհուրդներով ներմուծվել է «նախահայկական ցեղերի» մասին կեղծ գիտական վարկածը, որը բացարձակապես կապ չունի գրքի բովանդակության և, ընդհանրապես, հայագիտության հետ:

Կղավղիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» հիման վրա XIII դարում կազմված քարտեզի (էջ 93) բացատրությունում, հիշատակելով Մեծ Հայքի, Կողքիսի, Վիրքի և Աղվանքի տարածքները, հեղինակը գրել է. «Քարտեզը պատկերում է Կովկասը» (էջ 92): Մակայն այս քարտեզը Կղավղիոս Պտղոմեոսի երկում անվանված է «Ասիայի երրորդ քարտեզ» (որին քաջածանոթ է հեղինակը, էջ 113), ուր Կովկասի լեռները պատկերված են Աղվանքի ծայր հյուսիսում:

1793 թ. Սանկտ Պետերբուրգում տպագրված «Նոր ատլաս, կամ աշխարհի բոլոր անկյունների քարտեզների հավաքածու»-ից վերցված քարտեզի վերնագիրը՝ «Карта Азиатской Турции, почти всей, содержащей Анатолию, Грузию, Армению ...» սխալ է թարգմանվել. «Ասիական Թուրքիան, Անատոլիան, որը ներառում է Հայաստանը...» (էջ 220-221): Այնինչ այդ վերտառության թարգմանությունն է. «Ասիական Թուրքիայի քարտեզը՝ համարյա ամբողջի, որը ներառում է Անատոլիան, Վրաստանը, Հայաստանը...»: Քարտեզում խոսքը Արևմտյան Հայաստանի մասին է:

«Արևելյան Անատոլիա» տերմինը բացատրված է՝ «Հայկական Բարձրավանդակին տրվող անուն, որն իրականության մեջ գտնվում է Անատոլիայի արևելքում», «Восточная Анатолия – такое название дается Армянскому нагорью, которое в действительности находится на востоке Анатолии» (չջ 48-49): Այնինչ ճիշտ ձևն է. «Հայկական լեռնաշխարհին տրվող անուն, որն իրականության մեջ գտնվում է Անատոլիայից արևելք»,

“Восточная Анатолия - такое название дается Армянскому нагорью, которое в действительности находится к востоку от Анатолии” ” այլն:

Վրիպումների զգալի մասը մասնագիտական խմբագրամաբ շտկելի են: Սկզբնաղբյուրների, նրանց գտնվելու վայրի և ձեռագրական տեղեկությունների մանրամասն նշումները ընդգծում են օգտագործված նյութի վավերականությունը՝ շեշտակի հարված հասցնելով Հայոց պատմության նենգափոխողներին և հակագիտական դիրքերից գործող այլ վայ-գիտնականներին:

Պատմաբան Քրիստոֆեր Ուաքերը նշել է. «Ներկա ուսումնասիրությունը շատ օգտակար է առանձնացնելու իրականությունը կեղծիքից, ինչը նաև վերաբերում է հին քարտեզների վրա «Հայաստան» անվան գործածված լինել-չլինելու հարցին: Մինչև ԺԹ դարի վերջերը «Հայաստան» եզրի ներկայությունը քարտեզագետներին չէր անհանգստացնում: Հավանաբար այդ ժամանակների քարտեզագետներին ոչ ոք չէր հրահանգել խափանել որոշ աշխարհագրական եզրեր» («Նախաբան», էջ 6):

XIX դ. վերջից Արևմտյան Հայաստանում և այնուհետև ամբողջ Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում իրագործված հայերի եղեռնին (գենոցիդ) հաջորդեց դեռևս նախկինում սկսված Հայոց պատմական ժառանգության՝ հայերի իրենց Հայրենիքի՝ Արևմտյան և Արևելյան Հայաստանի տեղաբնիկ տերը լինելու իրողությունից ժխտումը թուրք «գաղափարախոսների» և հակահայկականորեն տրամադրված նրանց համախոհների կողմից: Ոչ միայն հրահանգվելու էր խափանել *Հայաստան* անվան հետ կապված «որոշ աշխարհագրական եզրերը» (օրինակ՝ *Հայկական լեռնաշխարհ* և *Արևմտյան Հայաստան* անվանումները, բռնազբոսիկ կերպով փոխարինելով սխալ կիրառմամբ՝ «Արևելյան Անատոլիա» տերմինով), այլև, շարունակելով և լրացնելով կատարված ոճրագործությունը, իրագործել մշակութային եղեռն, որի վերջին արտահայտություններից է Ջուղայի խաչքարերի ոչնչացումը:

Մեծ Եղեռնի հետևանքով Վանի հայրենի օջախից Թավրիզ գաղթած հայ ընտանիքի արժանավոր զավակը՝ Ռ. Գալյանը, իր գրքում ներկայացրել է ամբողջական Հայաստանի իրավա-պատմական ներուժով օժտված համաշխարհային քարտեզագրության վավերագրերը: Ռ. Գալյանի հրապարակած քարտեզները իրենց բովանդակությամբ և քարտեզագրման մակարդակով հաստատում են, որ Հայաստանը իր քաղաքակրթական կարևոր նշանակությամբ դարերի ընթացքում եղել է համաշխարհային քարտեզագրության ուշադրության կենտրոնում:

ԷՂՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր